



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
ԳՆՈՒՄՆԵՐԻ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

ք. Երևան

03.04.2018թ.

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**

**ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի  
թիվ ՍՑ-ԱՄ-2018/07**

ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը (այսուհետ նաև՝ Խորհուրդ) ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/438-18 գրությամբ «Թեոֆարմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգով ներկայացված հիմքերը, պարզեց հետևյալը.

**1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ՀՀ պաշտպանության նախարարության (այսուհետ՝ Պատվիրատու) 12.01.2018թ. թիվ ԴՎԱ/58 գրության հիման վրա, 16.01.2018թ. թիվ 03/26-3/438-18 գրությամբ Խորհրդում նախաձեռնել է «Թեոֆարմա» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ՝ Ցուցակ) ներառելու պաշտոնական ընթացակարգ:

**2. «Թեոֆարմա» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

«Վնումների բողոքարկման խորհուրդը 18.01.2018թ. թիվ ԳԲԽ-ՄԱ/1/636-18 գրությամբ կարծիք ստանալու նպատակով դիմել է «Թեոֆարմա» ՍՊԸ-ին:

Ի պատասխան վերոհիշյալ գրության՝ Ընկերությունը 22.01.2018թ. գրությամբ հայտնել է, որ համաձայն չէ «Վնումների բողոքարկման խորհուրդի» կողմից ներկայացրած նյութերում առկա «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից թույլ տրված խախտումների հետ և միաժամանակ հայտնել է, որ նշված անհամաձայնությունով պայմանավորված «Թեոֆարմա» ՍՊԸ-ն բողոք է ներկայացրել Խորհրդին, որը ներկայումս քննվում է ԳԲԽ-ԱՄ-2018/02 ծածկագրի ներքո և խնդրել է Խորհրդին Ընկերությանը Ցուցակում ներառելու վերաբերյալ քննարկումները հետաձգել մինչև ԳԲԽ-ԱՄ-2018/02 բողոքի վերաբերյալ որոշման ընդունումը:

Խորհուրդը բավարարել է Ընկերության միջնորդությունը:

Ընկերությունը ՍՑ-ԱՄ-2018/07 պաշտոնական ընթացակարգի վերաբերյալ 20.03.2018թ. Խորհրդին ուղղված գրությամբ հայտնել է հետևյալը.

«Վնումների բողոքարկման խորհուրդի» կողմից ներկայացրած «ՎՆ ՆՏԱԴ-ԳՎԱՊՁԲ-9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի 20-րդ չափաբաժնով նախատեսված դեղամիջոցների մատակարարման մասով, «Թեոֆարմա» ՍՊԸ-ն, ի թիվս այլ մասնակիցների, և մասնակցության հայտ է ներկայացրել:

Ընթացակարգի հրավերի 20-րդ չափաբաժնով գնման առարկա է հանդիսացել «Իզոֆլուրան n01ab06 /Իզոֆլուրան isoflurane/» Դեղամիջոցը, որը հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի չափանիշների համաձայն հետևյալն է՝

220	Իզոֆլուրան n01ab06	Իզոֆլուրան isoflurane	Հեղուկ շնչառման	100%, ապակե շիկ	100մլ
-----	-----------------------	--------------------------	--------------------	--------------------	-------

Ընկերությունը հայտնել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ. կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից 20-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքը իբր չի համապատասխանել Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրին:

Արդյունքում նախաձեռնվել է Ընկերությանը Ֆուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգ:

Մինչդեռ, Ընթացակարգի թիվ 20-րդ չափաբաժինն ի սկզբանե հայտարարվել է ՀՀ օրենսդրության պահանջների կոպիտ խախտումներով, քանի որ հրավերով սահմանված տեխնիկական բնութագրով դեղամիջոցը «100%, 100մլ ապակե շշիկ» նկարագրով գոյություն չունի, ավելին՝ ՀՀ-ում տվյալ դեղամիջոցը նշված չափանիշներով առհասարակ գրանցված չէ:

Տեխնիկական բնութագրում առկա տվյալները՝ «100%, 100 մլ» պահանջներով Ընկերության կողմից դիտարկվել է որպես վրիպակ: Պատվիրատուի կողմից առանց պետական գրանցամատյանից օգտվելու գնանշման ցանկերում արտատպվել է նախկինում նման բնութագիր ունեցող, Ընկերության կողմից երկար տարիներ ՀՀ ՊՆ-ին մատակարարված Ֆլորան 100%, 100 մլ դեղամիջոցի բնութագիրը, որն արդեն մի քանի տարի է գրանցված չէ ՀՀ-ում: Մյուս կողմից պրակտիկ հնարավոր չէ արտադրական պրոցեսում ստանալ 100%-ոց Իզոֆլուրան, քանի որ նա իր մեջ պարունակում է ուղեկցող խառնուրդներ, որոնցից պրակտիկ հնարավոր չէ ազատվել և դա նորմայի սահմաններում է ընդունվում: Այդ մասին են վկայում արտադրող կազմակերպության կողմից Ընկերությանը տրամադրած որակի հավաստագիրը՝ ուղեկցող խառնուրդների քանակով:

Ընկերությունը նշել է, որ Պատվիրատուի պահանջած 100% և Ընկերության կողմից ներկայացված 99.9% իրար համարժեք են, որը հաշվի առնելով Ընկերությունը չի բողոքարկել գնման առարկայի բնութագիրը մինչև հայտերի ներկայացման վերջնաժամկետը և ինչպես հետագայում պարզվեց խախտել է Օրենքի 50-րդ հոդվածի 2-րդ մասի 2-րդ կետը:

Ընկերությունը նշել է, որ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ ՀՀ-ում թույլատրվում է արտադրել, ներմուծել, բաշխել, բաց թողնել, իրացնել և կիրառել այն դեղերը, որոնք գրանցված են ՀՀ-ում, բացառությամբ սույն օրենքով սահմանված դեղերի:

Նույն հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ «5. Գրանցման ենթակա են դեղերի անվանում, բաղադրակազմ, դեղաչափ, դեղաձև, թողարկման ձև, նոր ցուցում, արտադրող (ներառյալ՝ յուրաքանչյուր արտադրական գործընթացն իրականացնող) գրանցման հավաստագրի իրավատեր»:

Ընկերությունը հայտնել է, որ ՀՀ ՊՆ-ի կողմից «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգով սահմանվել է «Իզոֆլուրան 100 տոկոս, 100մլ» դեղաձևն այն դեպքում, երբ դեղն ընդհանրապես ընդգրկված չէ Հայաստանի Հանրապետության դեղերի պետական գրանցամատյանում, որը հանգեցրել է Ընկերության կողմից առաջարկված 99.9% Իզոֆլուրանի հետ անհամապատասխանություն:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ ՊՆ-ի կողմից գնում հայտարարելիս դիտավորությամբ խախտվել են վերը նշված հոդվածով սահմանված պահանջները և Ընթացակարգի հրավերում ընդգրկվել է դեղամիջոց, որը տվյալ պահին ներառված չի եղել ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում, որի հետևանքով ՀՀ ՊՆ-ի կողմից խախտվել է «Դեղերի մասին» ՀՀ օրենքի պահանջը, հետևաբար օրենքի խախտմամբ է հայտարարել ընթացակարգը՝ 20-րդ չափաբաժնի մասով:

Միաժամանակ Ընկերությունը նշել է, որ Ընկերության կողմից կատարվել է հարցում՝ «Իզոֆլուրան n01ab06, հեղուկ շնչառման 100%, 100 մլ ապակե շիկ» դեղամիջոցի ՀՀ հիմնական ցանկում և ՀՀ դեղերի պետական գրանցամատյանում 2017թ. նոյեմբերի դրությամբ ընդգրկված լինելու վերաբերյալ, որին ի պատասխան՝ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության կողմից տրամադրվել է քաղվածք՝ ՀՀ դեղերի գրանցամատյանից, որի ռաումնասիրությունից ակնհայտ է, որ «Իզոֆլուրան n01ab06, հեղուկ շնչառման 100%, 100 մլ ապակե շիկ» դեղամիջոց որպես այդպիսին գրանցված չէ, այլ՝ գրանցված է «Իզոֆլուրան լուծույթ շնչառման» և «Իզոֆլուրան հեղուկ շնչառման, 100%, 250մլ ապակե շիկ» դեղամիջոցները:

Ընկերությունը նշել է, որ ՀՀ ԶՈՒ ռազմաբժշկական վարչության պետը իր 12.02.2018թ. գրությամբ ևս հաստատում է Ընկերության այն համոզմունքը, որ Ընթացակարգի հրավերով սահմանվել է գոյություն չունեցող դեղամիջոց:

Ընկերությունը հայտնել է, որ գնահատող հանձնաժողովի կողմից Ընկերությանը տրվել է մեկ օր ժամանակ իբր տեղ գտած տեխնիկական բնութագրի անհամապատասխանության շտկման համար, որը Ընկերության կողմից չի շտկվել:

Ընկերությունը նշել է, որ Ընկերության կողմից ներկայացված տեխնիկական բնութագիրը արդեն իսկ ընդունելի չի եղել ՊՆ-ի համար, իսկ մեկ օրվա ընթացքում ստանալ արժանահավատ պաշտոնական գրություն և ներկայացնել հիմնավորում Ընկերության

կողմից «Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ից հնարավոր չէր:

Ընկերությունը հայտնել է, որ հաշվի առնելով վերագրյալը, գտնում է, որ Խորհրդի կողմից Ընկերությանը Ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը պետք է չեղարկվի:

Քանի որ, ՊՆ-ն ի սկզբանե հայտարարել է մրցույթ այնպիսի ապրանքի համար, որն ըստ էության ՀՀ-ում օրինական գոյություն ունենալ չի կարող, գրանցված չէ, նրա բնութագրի երկակի աղավաղված ձևակերպումն ու ընկալումը հետագայում կարող է լինել վեճի առարկա տարբեր պետական ինստանցիաներում, իր մեջ կարող է պարունակել ամենատարբեր բնույթի ռիսկեր և անելանելի վիճակում դնել տնտեսվարողին:

Ընկերությունը նշել է, որ Օրենսդրության նման խախտման պայմաններում «Թեոֆարմա» ՍՊԸ-ին հանիրավի ներառելով Ցուցակում, զրկվելու է մրցույթներին մասնակցելու իր իրավունքից, որի հետևանքով կկրի վնասներ:

Ամփոփելով վերը նշվածը, Ընկերությունը խնդրել է Խորհրդին մերժել ՍՑ-ԱՄ-2018/07 պաշտոնական ընթացակարգը և Ընկերությանը չներառել Ցուցակում:

«Թեոֆարմա» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.01.2018թ. ժամը 10:45-ի նիստի վերաբերյալ, տնօրենը ապահովել է իր և իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ նշված խնդրի հետ կապված Ընկերությունը բողոք է ներկայացրել Խորհրդին, որը ներկայումս քննվում է ԳԲԽ-ԱՄ-2018/02 ծածկագրի ներքո և խնդրել է Խորհրդին Ընկերությանը Ցուցակում ներառելու վերաբերյալ քննարկումները հետաձգել մինչև ԳԲԽ-ԱՄ-2018/02 բողոքի վերաբերյալ որոշման ընդունումը:

Խորհրդի կողմից բավարարվել է Ընկերության միջնորդությունը և նիստը հետաձգվել է:

### **3. ՀՀ պաշտպանության նախարարության կողմից ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը**

ՀՀ պաշտպանության նախարարությունը 12.01.2018թ. թիվ ԴՎԱ/58 գրությամբ հայտնել է, որ ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար դեղորայքի ձեռքբերման

նպատակով կազմակերպված «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգին հայտ էին ներկայացրել թվով 13 մասնակիցներ, այդ թվում՝ «Թեոֆարմա» ՍՊԸ-ն:

«Թեոֆարմա» ՍՊԸ-ն ընթացակարգի 20-րդ չափաբաժնի մասով գնահատող հանձնաժողովի կողմից ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից: Գնահատող հանձնաժողովի առաջարկի հիման վրա Ընկերությունը սահմանված ժամկետում և կարգով ներկայացրել է ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3.1 կետով նախատեսված որակավորման փաստաթղթերը, որոնց գնահատման արդյունքում հանձնաժողովը գտել է, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված փաստաթղթում առկա է անհամապատասխանություն:

Պատվիրատուն հայտնել է, որ հանձնաժողովը հիմք ընդունելով ՀՀ կառավարության 04.05.2011թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 47-րդ կետը՝ 22.12.2017թ. ժամը 11:35-ի նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել Ընկերությանը մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել առկա անհամապատասխանությունները:

Պատվիրատուն հայտնել է, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից սահմանված ժամկետում և կարգով չշտկվեց առկա անհամապատասխանությունները և գնահատող հանձնաժողովը, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է Ընկերության հայտը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով Խորհրդի 23.01.2018թ. ժամը 10:45-ի նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

#### **4. ՍՑ-ԱՄ-2018/07 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը**

ՍՑ-ԱՄ-2018/07 պաշտոնական ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 9/1» ծածկագրով

գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Թեոֆարմա» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի թիվ 9-րդ և 20-րդ չափաբաժինների մասով:

2. Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, թիվ 20-րդ չափաբաժնի համար սահմանվել է՝ Իզոֆլուրան n01ab06, հեղուկ շնչառման, 100%, 100մլ ապակե շիկ:

3. Տեխնիկական բնութագրի ներքևի հատվածում նշված է հետևյալը՝

#### **Ծանոթություն.**

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

- Մասնակցի առաջարկում դեղաձևի թողարկման ձևը (փաթեթավորումը) կարող է ներկայացվել ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ոեեստր) առկա տվյալ դեղաձևի ցանկացած փաթեթավորմամբ /հիմք՝ ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 1) ենթակետ:

- Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ 73014 զորամաս (ք. Արուվյան):

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Հավելված 1-ի համաձայն՝ «Թեոֆարմա» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 20-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից

5. Նույն արձանագրության 4-րդ կետի 4.2 ենթակետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաթղթերը:

6. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի

կողմից 20-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի, մասնակցի կողմից ամբողջական նկարագրում նշված է «<Եղուկ շնչառական, 99.9%, 100մլ ապակե շիկ» այնինչ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ պետք է լինի «<Եղուկ շնչառական, 100%, 100մլ ապակե շիկ»։ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «<ավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված հետևյալ դրույթները.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

7. Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, հանձնաժողովը 22.12.2017թ. ժամը 11:35-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

8. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Թեոֆարմա» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում և կարգով չեն շտկվել առկա անհամապատասխանությունները:

9. «Թեոֆարմա» ՍՊԸ-ն 09.01.2018թ. բողոք է ներկայացրել ՀՀ գնումների բողոքարկման խորհրդին «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակներում՝ վիճարկելով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի՝ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի հայտը մերժելու մասին վերը նշված որոշումը:



10. ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը 26.01.2018թ. թիվ ԳԲԽ-ԱԱ-2018/02 որոշմամբ մերժել է Ընկերության բողոքը:

#### 5. Խորհրդի հիմնավորումները և եզրահանգումը

Խորհուրդն, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/438-18 գրությունը, ՀՀ պաշտպանության նախարարության 12.01.2018թ. թիվ ԴՎԱ/58 գրությունը՝ կից փաստաթղթերով, «Թեոֆարմ» ՍՊԸ-ի 20.03.2018թ. գրությունը՝ կից նյութերով, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ՝ Օրենք) 34-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ հայտերը գնահատվում են հրավերով սահմանված կարգով: Բավարար են գնահատվում հրավերով նախատեսված պայմաններին համապատասխանող հայտերը, հակառակ դեպքում հայտերը գնահատվում են անբավարար և մերժվում են:

Նույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետի և 6-րդ մասի համաձայն՝

5. Առաջին և հաջորդաբար տեղերը զբաղեցրած մասնակիցներին որոշելուց հետո՝ հրավերով սահմանված ժամկետում՝

1) առաջին տեղը զբաղեցրած մասնակիցը հանձնաժողովին է ներկայացնում իր՝ գնումներին մասնակցելու իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) հանձնաժողովը գնահատում է սույն մասի 1-ին կետի համաձայն ներկայացված փաստաթղթերի (տեղեկությունների) համապատասխանությունը հրավերով սահմանված պահանջներին, և հրավերով սահմանված դեպքերում ու կարգով գնահատում է տվյալ մասնակցի գնային և ոչ գնային (տեխնիկական) առաջարկի հիմնավորվածությունը:

6. Հայտը գնահատվում է բավարար, եթե սույն հոդվածի 5-րդ մասի համաձայն ներկայացված տվյալները բավարարում են հրավերով սահմանված պահանջները: Նման դեպքում մասնակիցը հայտարարվում է ընտրված:

Օրենքի 28-րդ հոդվածի 2-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ հրավերում նախատեսվում է նաև, որ մասնակիցը՝

1) գնումներին մասնակցելու իր իրավունքը և հրավերով նախատեսված որակավորման չափանիշներին համապատասխանությունը հիմնավորելու համար հայտով ներկայացնում է իր հաստատած հայտարարությունը, պայմանով, որ մասնակիցը պարտավորվում է սույն օրենքով նախատեսված դեպքերում և կարգով ներկայացնել հայտարարությունը հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը (տեղեկությունները):

2) ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերության համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է ապրանքների գնման դեպքում իր կողմից հաստատված հայտարարություն՝ առաջարկվող ապրանքի՝ հրավերով նախատեսված տեխնիկական բնութագրերին համապատասխանության վերաբերյալ՝ պայմանով, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակից ճանաչվելու դեպքում հրավերով սահմանված կարգով ներկայացնում է նաև առաջարկվող ապրանքային նշանն արտադրողի անվանումը, ծագման երկիրը, ապրանքի տեխնիկական բնութագրերը (այսուհետ՝ ապրանքի ամբողջական նկարագիր):

Կարգի 43-րդ կետի 4-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով ծանուցումն ուղարկելու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով ներկայացնել որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերը, բացառությամբ սույն կարգով նախատեսված դեպքերի, ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթուղթը, իսկ բանկային երաշխիքի ձևով ներկայացված հայտի ապահովման բնօրինակը՝ կից գրությամբ: Սույն մասով սահմանված ժամկետում փաստաթղթեր ընդհանրապես չներկայացվելու դեպքում հանձնաժողովը հայտերի գնահատման նիստում մերժում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցի հայտը և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացնում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

Կարգի 47-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից փաստաթղթերն ամբողջական չներկայացվելու, ինչպես նաև ներկայացված՝ ներառյալ կոմիտեի կողմից տրամադրված որակավորման չափանիշները հիմնավորող՝ հրավերով նախատեսված փաստաթղթերի, իսկ ապրանքների գնման դեպքում նաև սույն կարգի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» պարբերությամբ նախատեսված փաստաթղթի գնահատման արդյունքում հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանություններ արձանագրվելու դեպքում հանձնաժողովի քարտուղարը նույն օրն էլեկտրոնային եղանակով ծանուցում է առաջին տեղն զբաղեցրած մասնակցին՝ առաջարկելով մեկ աշխատանքային օրվա ընթացքում շտկել անհամապատասխանությունը:

Կարգի 48-րդ կետի համաձայն՝ առաջին տեղն զբաղեցրած մասնակցի կողմից արձանագրված անհամապատասխանությունը սահմանված ժամկետում՝

- 1) շտկելու դեպքում հայտը գնահատվում է բավարար և առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտարարվում է ընտրված մասնակից.
- 2) չշտկելու դեպքում հանձնաժողովի որոշմամբ հայտը մերժվում է, և փաստաթղթեր ներկայացնելու պահանջ է ներկայացվում հաջորդաբար տեղ զբաղեցրած մասնակցին:

ՀՀ պաշտպանության նախարարության կարիքների համար «Դեղորայքի» ձեռքբերման նպատակով կազմակերպվել է «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊՁԲ 9/1» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով «Թեոֆարմա» ՍՊԸ-ն հայտ է ներկայացրել Ընթացակարգի թիվ 9-րդ և 20-րդ չափաբաժինների մասով:

Ընթացակարգի հրավերի պայմանագրին կից Հավելված 1-ով՝ Տեխնիկական բնութագրով, թիվ 20-րդ չափաբաժնի համար սահմանվել է՝ Իզոֆլուրան n01ab06, հեղուկ շնչառման, 100%, 100մլ ապակե շիկ:

*Տեխնիկական բնութագրի ներքևի հարվածում նշված է հետևյալը՝*

**Ծանոթություն.**

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային ժամկետ /ա

ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

- Մասնակցի առաջարկում դեղաձևի թողարկման ձևը (փաթեթավորումը) կարող է ներկայացվել ՀՀ գրանցված դեղերի պետական գրանցամատյանում (ոեեստր) առկա տվյալ դեղաձևի ցանկացած փաթեթավորմամբ /հիմք՝ ՀՀ կառավարության 02.05.2013թ. թիվ 502-Ն որոշմամբ հաստատված չափորոշիչների 3-րդ կետի 1) ենթակետ:

- Մատակարարման վայրը՝ ՀՀ ՊՆ 73014 գորամաս (ք. Աբովյան):

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 28.11.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 3 արձանագրության 4.1 կետով կայացված որոշմամբ Հավելված 1-ի համաձայն՝ «Թեոֆարմա» ՍՊԸ-ն Ընթացակարգի թիվ 20-րդ չափաբաժնի մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից

Նույն արձանագրության 4-րդ կետի 4.2 ենթակետով որոշվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակիցներին առաջարկել ներկայացնելու Ընթացակարգի հրավերի 2-րդ մասի՝ հայտը պատրաստելու հրահանգի 3-րդ կետով նախատեսված փաստաղթերը:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 18.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 4 արձանագրության 1-ին կետի 1.1 ենթակետով արձանագրվել է, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից 20-րդ չափաբաժնի մասով առաջարկվող ապրանքը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերով սահմանված տեխնիկական բնութագրի, մասնակցի կողմից ամբողջական նկարագրում նշված է «Վեղուկ շնչառական, 99.9%, 100մլ ապակե շիկ» այնինչ՝ Ընթացակարգի հրավերով հստակ սահմանված է, որ պետք է լինի «Վեղուկ շնչառական, 100%, 100մլ ապակե շիկ»: Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «Հավելված 6.1» ներառված չեն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված հետևյալ դրույթները.

- Դեղամիջոցների մնացորդային պիտանելիության ժամկետները հանձման պահին պետք է համապատասխանեն ՀՀ կառավարության 02.05. 2013թ. թիվ 502-Ն որոշման 7-րդ կետի պահանջներին, մասնավորապես 2,5 տարի և ավելի պիտանելիության ժամկետ ունեցող դեղերը հանձնման պահին պետք է ունենան առնվազն 2 տարի մնացորդային

ժամկետ /ա ենթակետ/, իսկ մինչև 2,5 տարի պիտանելիության ժամկետ ունեցող ապրանքերը՝ առնվազան պիտանելիության ժամկետի 2/3-ը /բ ենթակետ/:

- Մատակարարման ժամանակ անհրաժեշտ է ներկայացնել մատակարարված ապրանքատեսակների խմբաքանակի որակի սերտիֆիկատ:

Նույն արձանագրությամբ, հիմք ընդունելով Կարգի 47-րդ կետը, հանձնաժողովը 22.12.2017թ. ժամը 11:35-ին կայացած նիստում որոշել է մեկ աշխատանքային օրով կասեցնել նիստը և առաջարկել մասնակիցներին մինչև կասեցման ժամկետի ավարտը շտկել վերը նշված անհամապատասխանությունները:

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը 26.12.2017թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 5 արձանագրության 1-ին կետի 1.2 ենթակետով կայացված որոշմամբ, հիմք ընդունելով Կարգի 48-րդ կետի 2-րդ ենթակետը, մերժել է «Թեոֆարմա» ՍՊԸ-ի հայտը, այն հիմնավորմամբ, որ վերջինիս կողմից սահմանված ժամկետում և կարգով չեն շտկվել առկա անհամապատասխանությունները:

Խորհուրդը ԳԲԽ-ԱՄ-2018/02 որոշմամբ արձանագրել է, որ Ընթացակարգի Տեխնիկական բնութագրով սահմանված է «<Եղուկ շնչառական, 100%, 100մլ ապակե շշիկ>, մինչդեռ «Թեոֆարմա» ՍՊԸ-ի կողմից ներկայացված հավելված 6.1-ի «Տեխնիկական բնութագրերը» սյունակում նշված է «<Եղուկ շնչառման 99.9%, 100մլ ապակե շշիկ>, որը չի համապատասխանում Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի պահանջին:

Ինչ վերաբերում է Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի կողմից արձանագրված այն անհամապատասխանությանը, որ Մասնակցի կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագրում «<Հավելված 6.1> ներառված չեն Ընթացակարգի հրավերի տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները, ապա Խորհուրդը ԳԲԽ-ԱՄ-2018/02 որոշմամբ արձանագրել է, որ Ընթացակարգի հրավերով սահմանված չէ, որ տեխնիկական բնութագրի «Ծանոթություն» մասով սահմանված դրույթները հանդիսանում են պարտադիր պայմաններ և պետք է ներառվեն մասնակցի կողմից ներկայացվող 6.1 հավելվածում, ուստի Խորհուրդը գտել է, որ Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը սույն մասով արձանագրելով անհամապատասխանություն գործել է ոչ իրավաչափ:

Խորհուրդն արձանագրում է, որ ՍՑ-ԱՄ-2018/07 պաշտոնական ընթացակարգի շրջանակներում «Թեոֆարմա» ՍՊԸ-ն 20.03.2018թ. գրությամբ Խորհրդին է ներկայացրել ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 08.02.2018թ. թիվ 0106017418 գրությունը համաձայն որի վերջինս Ընկերությանը հայտնել է, որ Հայաստանի Հանրապետությունում գրանցված է Իզոֆլուրան դեղը 100%-250 մլ: Անեստերան առևտրային անվանմամբ նույն ակտիվ նյութ՝ Իզոֆլուրան պարունակող դեղի տուփի վրա նշված է 99,9%, ինչը համապատասխանում է միջազգային դեղագրքերին (ֆարմակոպեաներին) և նշանակում է, որ դեղի խտությունը պետք է լինի 99.9%-ից ոչ պակաս, որը համարժեք է Իզոֆլուրան 100%-ին: Անեստերանի գրանցման ժամկետը ավարտվել է 01.02.2018թ.ին:

Այսպիսով, «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի «ա» պարբերության համաձայն՝ **մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում սրանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին փվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը»:**

Վերոգրյալով պայմանավորված Խորհուրդը գտնում է, որ «Թեոֆարմա» ՍՊԸ-ն «ՀՀ ՊՆ ՆՏԱԴ-ԳՀԱՊԶԲ-9/1» ծածկագրով ընթացակարգի շրջանակում չի խախտել Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով նախատեսված ստանձնած պարտավորություն, քանի որ ըստ ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Էմիլ Գաբրիելյանի անվան դեղերի բժշկական տեխնոլոգիաների փորձագիտական կենտրոն» ՓԲԸ-ի 08.02.2018թ. թիվ 0106017418 գրության՝ Ընկերության կողմից ներկայացված «Հեղուկ շնչառական, 99.9%, 100մլ ապակե շշիկ» դեղը համարժեք է Ընթացակարգի հրավերով պահանջվող «Հեղուկ շնչառական, 100%, 100մլ ապակե շշիկ» դեղին:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

ՀՀ ֆինանսների նախարարության 16.01.2018թ. թիվ 03/26-3/438-18 գրությամբ «Թեոֆարմա» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ՝ 02248584) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված պաշտոնական ընթացակարգը մերժել:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումն իրավապարտադիր է:

ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կարող է բողոքարկվել դատական կարգով:

ՀՀ գնումների բողոքարկման  
խորհրդի անդամ՝



ՄԿԵՐ ԱՆԱՆՅԱՆ